ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2015, 36 – Ա

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ, ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 19-րդ կետի 10-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի ռեկտորի առաջարկությունը՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհուրդը, «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված կազմով, *որոշում է.*

1. Հաստատել դատախազների վերապատրաստման 2015 թվականի ուսուցման ծրագիրը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստման 2015 թվականի ուսուցման ծրագիրը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատել դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2015 թվականի ուսուցման ծրագիրը՝ համաձայն հավելված 3-ի:

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի նախագահ *Է.Բաբայան*

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի անդամներ *Ա.Դավթյան*

Ա.Մկրտչյան

Հ.Մարտիրոսյան

2015թ. հունվարի 30

ք.Երևան

Հավելված 3
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2015 թվականի
հունվարի 30-ի թիվ 36-Ա որոշման

Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր
ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է 2015թ. դատախազների թեկնածությունների ցուցակում ընդկրված անձանց (այսուհետ՝ Ունկնդիրների) կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ունկնդիրների մոտ դատախազի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը հետևյալ ոլորտներում.

ա) Ընդհանուր մասնագիտական ոլորտ: Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է սահմանադրական իրավունքի, մարդու իրավունքների եվրոպական իրավունքի, ինչպես նաև մասնագիտական էթիկայի հիմնահարցերին, ինչպես նաև կիրառական իրավաբանությանը: Ուսուցման գործընթացը նպատակաուղղված է սահմանադրական իրավունքի և արդարադատության, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության, մասնագիտական էթիկայի, հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքների ընդլայնմանը, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերի համարժեք ընկալման և կիրառման, իրավական վերլուծությունների կատարման, իրավավերլուծական տեքստերի շարադրման, իրավաչափ վարքագծի ընտրության կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

բ) Հատուկ մասնագիտական ոլորտ: Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է քրեական իրավունքում և դատավարությունում առկա արդի հիմնահարցերին, ինչպես նաև ընդհանուր վարչական իրավունքի, վարչական դատավարության, պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հարցերին: Ուսումնական գործընթացը նպատակաուղղված է քրեական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի, քրեական իրավունքի, քրեական գործերով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի, ինչպես նաև ընդհանուր վարչական իրավունքի, վարչական դատավարության և պետական շահերի պաշտպանության և արդի այլ հիմնահարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը, ինչպես նաև կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

գ) Հարակից մասնագիտական ոլորտ: Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է հասարակագիտական ուղղվածություն ունեցող հարցերին: Մասնագիտական պատրաստման արդյունքում ունկնդիրները ձեռք

կբերեն անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ հաղորդակցության, բանակցությունների վարման, արդարության ուսմունքների և Էթիկայի, փաստարկման, ներազդման հոգեբանության վերաբերյալ:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ լսարանային ուսուցման և փորձաշրջանի եղանակներով:

5. Լսարանային ուսուցումն իրականացվում է ընդհանուր, հարակից և հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլների հիման վրա, ինչպես նաև հրավիրյալ դասախոսությունների միջոցով: Դասընթացների (ներառյալ՝ քննաշրջանի) ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 440 ակադեմիական ժամ (ներառյալ՝ 40 ակադեմիական ժամ քննաշրջանի համար), իսկ հրավիրյալ դասախոսությունների ժամաքանակը՝ 20 ակադեմիական ժամ:

6. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ՝ ըստ սույն ուսուցման ծրագրով նախատեսված ուղղությունների: Մեկ օր փորձաշրջանի տևողությունը սահմանվում է 10 ակադեմիական ժամ: Փորձաշրջանի ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 770 ակադեմիական ժամ: Փորձաշրջանի ավարտին յուրաքանչյուր ունկնդիր գնահատվում է դրական կամ բացասական:

7. Ուսումնառության ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 1230 ակադեմիական ժամ:

8. Ուսումնառության տևողությունը սահմանվում է 9 ամիս 3 շաբաթ (2015 թվականի փետրվարի 23-ից դեկտեմբերի 11-ը)՝ ներառյալ ավելի քան 4 ամիս տևողությամբ փորձաշրջանը (հունիսի 8-ից հոկտեմբերի 16-ը):

II. Ուսումնառության ժամանակային կառուցվածքը

	Դասընթացների ժամաքանակ	**Քննաշրջանի ժամաքանակ**	**Հրավիրյալ մասնագետների դասախոսությունների ժամաքանակ**	**Փորձաշրջանի ժամաքանակ**	**Ընդհանուր ժամաքանակ**
Ուսուցման 1-ին հատված (փետրվար 23-ապրիլ 10)	**100 ժամ** (6 դասընթաց) (փետրվար 23-մարտ 27)	**6 ժամ** (3 քննություն) (մարտ 30-ապրիլ 10)	-	-	**106 ժամ**
Ուսուցման 2-րդ հատված (ապրիլ 13-մայիս 29)	**120 ժամ** (8 դասընթաց) (ապրիլ 13-մայիս 15)	**14 ժամ** (7 քննություն) (մայիս 18-մայիս 29)	**10 ժամ**	-	**144 ժամ**
Ուսուցման 3-րդ հատված (հունիս 1-հուլիս 17)	**80 ժամ** (5 դասընթաց) (հունիս 1-հուլիս 3)	**10 ժամ** (5 քննություն) (հուլիս 6 – հուլիս 17)	-	**120 ժամ** (հունիսի 8-հուլիս 17)	**210 ժամ**

Ուսուցման 4-րդ հատված (հուլիս 20-հոկտեմբեր 16)	-	-	-	**650 ժամ** (հուլիս 20-հոկտեմբ. 16)	**650 ժամ**
Ուսուցման 5-րդ հատված (հոկտեմբեր 19-դեկտեմբեր 11)	**100 ժամ** (5 դասընթաց) (հոկտեմբ. 19-նոյեմբեր 20)	**10 ժամ** (5 քննություն) (նոյեմբեր 23-դեկտեմբեր 11)	**10 ժամ**	-	**120 ժամ**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**400 ժամ**	**40 ժամ**	**20 ժամ**	**770 ժամ**	**1230 ժամ**

III. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ցանկ

1. Ընդհանուր մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-002-15	ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները	20
2.	J-004-15	Իրավաբանական գիր և մեկնաբանություն	20
3.	J-003-15	ՄԻԵԴ իրավաբանության հիմունքները և արդի միտումները	10
4.	J-009-15	Փորձաքննությունների նշանակման և դրանց արդյունքների գնահատման արդի հարցերը	10
5.	J-008-15	Դատախազի մասնագիտական էթիկա	10
6.	J-014-15	Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերը	10

2. Հարակից մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
7.	G-001-15	Հաղորդակցության և բանակցության հմտություններ	20
8.	G-002-15	Արդարության ուսմունքներ և էթիկա	20
9.	G-004-15	Փաստարկում և հռետորիկա	20
10	G-006-15	Ժամանակի կառավարում	10
11	G-008-15	Ներազդման հոգեբանություն	10

3. Հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
12.	Q-003-15	ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը	40
13.	Q-001-15	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով	30
14.	Q-002-15	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը	30
15.	Q-015-15	Մինչդատական վարույթի ընթացքում դատախազական գործառույթների իրացման հմտությունները	30
16.	Q-016-15	Դատարանում մեղադրանքի պաշտպանության հմտություններ	30
17.	Q-017-15	Կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցերը	20
18.	Q-030-15	Կիբերհանցագործության դեմ պայքարի արդի հարցերը	20
19.	Q-014-15	Քրեական վարույթով միջազգային փոխօգնության արդի հարցերը	10
20.	Q-019-15	Պատիժների կիրառման նկատմամբ դատախազական հսկողության արդի հարցերը	10
21.	A-009-15	ՀՀ ընդհանուր վարչական իրավունքի հիմունքները	10
22.	J-013-15	Պետական շահերի պաշտպանության արդի հարցերը	10

IV. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) համառոտ նկարագիրը

1. J-002-15. ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները

Դասընթացը պայմանավորված է սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության ոլորտում Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է սահմանադրական իրավունքի գիտության առարկայի, մեթոդների, սահմանադրական իրավունքի գիտության զարգացման արդի միտումների, Հայաստանի Հանրապետության դատական իշխանության սահմանադրական հիմունքների (դատական իշխանության մարմինների համակարգի կազմակերպման և գործունեության կարգի) դատախազության սահմանադրական կարգավիճակի, սահմանադրական արդարադատության (սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակի, կազմակերպման և գործունեության կարգի, սահմանադրական դատարանի լիազորությունների) վերաբերյալ հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ J-003-15 դասընթացի հետ համատեղ:

2. J-004-15. Իրավաբանական գիր և մեկնաբանություն

Դասընթացը պայմանավորված է համոզիչ իրավական վերլուծությունների կատարման և շարադրման, իրավամեկնաբանողական հնարքների կիրառման ոլորտում կարողությունների և հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է իրավավերլուծական ռազմավարությունների ընտրության, IRAC համակարգով իրավական վերլուծությունների կատարման և շարադրման, օրենսդրական և նախադեպային տեքստերի հետ աշխատանքում իրավամեկնաբանողական հնարքների կիրառման, իրավական վերլուծությունների լեզվական որակների ապահովման հետ կապված հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

3. J-003-15. ՄԻԵԴ իրավաբանության հիմունքները և արդի միտումները

Դասընթացը պայմանավորված է ՄԻԵԴ գործունեության վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՄԻԵԴ կողմից մշակված իրավական հայեցակարգերի բովանդակության, դրանց իրավակիրառ արժեքի և զարգացման միտումների, ՄԻԵԴ հիմնական նպատակների, իրավազորության շրջանակի, գանգատների ընդունելիության պայմանների, գործերի քննության կարգի, վճիռների կատարման հետ կապված հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ J-002-15 դասընթացի հետ համատեղ:

4. J-009-15. Փորձաքննությունների նշանակման և դրանց արդյունքների գնահատման արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է փորձաքննությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք և արդյունավետ փորձաքննությունների նշանակման կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քրեական, վարչական և քաղաքացիական վարույթներում փորձաքննությունների նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, կատարման և արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

5. J-008-15. Դատախազի մասնագիտական էթիկա

Դասընթացը պայմանավորված է դատախազի մասնագիտական էթիկայի կանոնների հետ կապված գիտելիքներ հաղորդելու և դրանք կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է դատախազական գործունեություն իրականացնելիս և ոչ դատախազական գործունեության ընթացքում դատախազի վարքագծի կանոնների, դատախազների էթիկայի հարցերով վարույթի հետ կապված հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

6. J-014-15. Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիոն երևույթների, դրա դեմ տարվող պայքարի ընդհանուր իրավիճակի, հակակոռուպցիոն պայքարի իրավական (ներպետական և միջազգային, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Եվրախորհրդի Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի

հանձնաժողովի (ՄՈՆԻՎԱԼ) հանձնարարականները), և ինստիտուցիոնալ շրջանակների (ներպետական և միջազգային, այդ թվում՝ ԳՐԵԿՈ-ի և ՄՈՆԻՎԱԼ-ի գործունեությունը), համապատասխան այլ շահագրգիռ կողմերի (հասարարական կազմակերպությունների, ՁԼՄ-երի) մասնակցության և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

7. G-001-15. Հաղորդակցության և բանակցության հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է Ունկնդիրներին իրենց պաշտոնեական գործառույթների արդյունավետ իրականացման կարևոր գրավական հանդիսացող հաղորդակցությունների և բանակցությունների վերաբերյալ բազային գիտելիքների ձեռքբերման համար: Նշվածը թույլ կտա ձևավորել կառուցողական փոխհարաբերություններ և կանխել հնարավոր ռիսկերը պաշտոնեական և ոչ պաշտոնեական գործունեության ընթացքում:

Դասընթացը ներառում է հաղորդակցության էությունը և տեսամեթոդական հիմքերը, հաղորդակցության արգելքները և դրանց հաղթահարման ուղիները, մանիպուլյացիան և հակամանիպուլյացիայի միջոցները, բանակցությունների էությունը, ոճերը, բանակցային գործընթացի ժամանակակից առաջադիմական մոտեցումները, արդյունավետ փաստարկների կառուցումը բանակցությունների ընթացքում:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

8. G-002-15. Արդարության ուսմունքներ և Էթիկա

Դասընթացը կարևոր է արդարության տարբեր հայեցակարգերի իմացությամբ արդարադատության համակարգում մարդակենտրոն մոտեցումները հիմնավորելու և հրամայական դարձնելու համար: Դասընթացը վերաբերում է էթիկայի հիմնախնդիրներին՝ արդարադատության իրականացման գործընթացում ծագող հարցերի համատեքստում: Դասընթացն անհրաժեշտ է բարոյական գիտակցության զարգացման տեսանկյունից կարևորություն ներկայացնող տեսական գիտելիքների ձեռքբերման, արդարադատության համակարգում հրամայական (իմպերատիվ) կամ անհրաժեշտ վարքագիծ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է արժեքային մոնիզմի և արժեքային փլյուրալիզմի հայեցակարգերի ընդհանուր բնութագիրը, սոցիալական գործողության ու բարոյական վարքագծի միջև կապը, բարոյականության և իրավունքի հարաբերակցությունը, բարոյական պարտքին ու բարձրագույն բարիքին վերաբերող դիրքորոշումների քննարկումը և այլն:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

9. G-017-15. Փաստարկում և հռետորիկա

Դասընթացն անհրաժեշտ է ապացուցման, հերքման, հիմնավորման, զրուցակիցների մոտ համոզմունքի ձևավորման, տպավորիչ ելույթի ու արդյունավետ բանավեճի տեխնոլոգիաների տիրապետման առումով:

Դասընթացը ներառում է փաստարկման գործընթացի բաղադրիչները, եղանակները, փաստարկման համակարգին ներկայացվող պահանջները, ավանդական և ժամանակակից հռետորիկայի զինանոցը, առավել հաճախ հանդիպող սխալները, բանավեճի ընթացքում կիրառվող կառուցողական և ապակառուցողական տեխնոլոգիաները և վերջիններիս չեզոքացման մեթոդաբանական սկզբունքները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

10. G-006-15. Ժամանակի կառավարում

Դասընթացն անհրաժեշտ է Ունկնդիրների մոտ ժամանակի արդյունավետ պլանավորման, կառավարման, ինչպես նաև անձնական և մասնագիտական

կազմակերպվածության մակարդակի բարձրացման մասին գիտելիքների և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է ժամանակի և նրա նշանակության մասին հասկացությունը, ժամանակը՝ որպես անձի էներգետիկ պոտենցիալ, ժամանակի տեսակները, ժամանակի ընկալման տեսակները, գործունեության կառուցվածքը և դրա ժամանակային բնութագրիչները, մարդը և ժամանակը ճգնաժամային իրավիճակներում, մասնագետի ժամանակային կոմպետենտություն, ժամանակի հիմնական «թակարդները», ժամանակի կորստի և ժամանակային նախապատվությունների վերլուծություն, խրոնոմետրաժ, ժամանակի կառավարման սկզբունքներն ու ռազմավարությունները, գլոբալ նպատակների որոշումը, երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը, կարճաժամկետ և օպերատիվ պլանները, նախապատվությունների որոշումը ABC վերլուծության միջոցով, Էյզենհաուերի սկզբունքը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

11. G-008-15. Ներազդման հոգեբանություն

Դասընթացն անհրաժեշտ է ներազդման հոգեբանական հիմքերն իմանալու, ներազդման և մանիպուլյացիայի տեխնիկաներին ծանոթանալու և դրանցից պաշտպանվելու համար:

Դասընթացը ներառում է ներազդումը որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, հոգեբանական ներազդման էությունը, մարդու հոգեկանը և սոցիալ-հոգեբանական ազդեցությունը, ներազդման նպատակները, հոգեբանական անվտանգության խնդիրը ժամանակակից հասարակության մեջ, ներազդման միջոցները և տեսակները, քաղաքակիրթ հոգեբանական ներազդում, ներազդման սկզբունքները, մեխանիզմները և ավտոմատիզմները, մանիպուլյացիայի սահմանումը, դրսևորումները և տեսակները, խմբի ազդեցությունը անձի վրա, խմբային ներազդման օրինաչափությունները և եղանակները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

12. Q-003-15. ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը

Դասընթացը անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումները մատուցելու, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում սահմանված իրավակարգավորումների էության և տրամաբանության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է ՀՀ քրեական դատավարության առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը: Դասընթացը ներառում է նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգային բնութագրին, քրեական դատավարության սկզբունքների նոր համակարգին, քրեական դատավարության նոր հասկացութային ապարատին, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության նոր կառուցակարգերին վերաբերող հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ Q-001-15 դասընթացի հետ համատեղ:

13. Q-001-15. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և կարողությունների ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ անձի ազատության և անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքի) պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ Q-003-15 դասընթացի հետ համատեղ:

14. Q-002-15. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է քրեական նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգի հիմնադրույթները, քրեաիրավական ինստիտուտների, այդ թվում պատժողական քաղաքականության զարգացման միտումները և հեռանկարները, ինչպես նաև գործնականում առաջացող հանցավոր արարքների ճշգրիտ որակման հարցերը և դրանց լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառական փորձը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

15. Q-015-15. Մինչդատական վարույթի ընթացքում դատախազական գործառույթների իրացման հմտությունները

Դասընթացն անհրաժեշտ է մինչդատական վարույթի ընթացքում դատախազական գործառույթների վերաբերյալ գիտելիքների շրջանակն ընդլայնելու, ինչպես նաև այդ ոլորտում համապատասխան կարողություններ և հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է քրեական վարույթ հարուցելու, որպես մեղադրյալ ներգրավելու, հետաքննության և նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնելու, մինչդատական վարույթի ընթացքում հարկադրանքի միջոցների կիրառման իրավաչափության նկատմամբ հսկողություն իրականացնելու դատախազական գործառույթների վերաբերյալ հարցերը, ինչպես նաև մինչդատական և դատական վարույթների ընթացքում կայացվող դատախազական ակտերին ներկայացվող կառուցվածքային և բովանդակային պահանջների վերաբերյալ գործնական հարցերը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով:

16. Q-016-15. Դատարանում մեղադրանքի պաշտպանության հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է դատական վարույթների ընթացքում դատախազական գործառույթների վերաբերյալ գիտելիքների շրջանակն ընդլայնելու, ինչպես նաև այդ ոլորտում համապատասխան կարողություններ և հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է դատական նիստի նախապատրաստական մասում, դատական քննության ընթացքում, ինչպես նաև դատական վերանայման վարույթներում դատախազական գործառույթների վերաբերյալ գործնական հարցերը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով:

17. Q-017-14. Կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է մեղադրյալի հարցաքննության և այլ քննչական գործողությունների կատարման տակտիկային, ինչպես նաև կյանքի, առողջության, սեփականության, տնտեսական գործունեության, հասարակական անվտանգության, հասարակական կարգի ու բնակչության առողջության դեմ ուղղված առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկային վերաբերող հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

18. Q-030-15. Կիբերհանցագործությունների դեմ պայքարի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է <<Կիբերհանցագործությունների մասին>> ԵԽ Կոնվենցիայի կիրառման, նշված բնույթի հանցագործությունների որակման և քննության առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է <<Կիբերհանցագործությունների մասին>> ԵԽ Կոնվենցիայով նախատեսված քրեական հանցագործությունների վերաբերյալ նորմերի իմպլեմենտացիայի խնդիրները ՀՀ քրեական օրենսգրքում, նշված Կոնվենցիայի հիման վրա ստեղծված կոմիտեի (T-CY)՝ արարքների որակման հետ կապված բանաձևերը, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքների որակման հիմնախնդիրները, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու քրեադատավարական առանձնահատկությունները և նշված բնույթի հանցագործություններով միջազգային փոխօգնության հիմնախնդիրները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

19. Q-014-15. Քրեական վարույթով միջազգային փոխօգնության արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է միջազգային փոխօգնության արդի հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման համար:

Դասընթացը ներառում է ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ, այդ թվում միջազգային պայմանագրերով նախատեսված միջազգային փոխօգնության տեսակների, եղանակների, սուբյեկտների, պայմանների վերաբերյալ հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

20. Q-019-15. Պատիժների կիրառման նկատմամբ դատախազական հսկողության արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է պատիժների կիրառման ոլորտում դատախազական գործառույթների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է քրեական օրենքով նախատեսված պատժատեսակների կիրառման նկատմամբ դատախազական հսկողության վերաբերյալ հարցերը, մասնավորապես, դատախազի՝ ազատությունից զրկված անձանց պահելու վայրեր այցելելու նպատակներն ու կարգը, զրկված կամ ազատությունը սահմանափակված անձանց հիմնական իրավունքներին վերաբերող իրավական ակտերի օրինականության ստուգումը և անօրինական ակտերի նկատմամբ դատախազական ներգործության միջոցները, պատժի ենթարկված անձանց հարցման ենթարկելու, տեղեկատվություն ստանալու և բացատրություններ վերցնելու հիմքերը և կարգը, ապօրինի պահվող անձանց ազատ արձակելու հիմքերը և կարգը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

21. A-009-15. ՀՀ ընդհանուր վարչական իրավունքի հիմունքները

Դասընթացն անհրաժեշտ է վարչարարության հիմունքները և վարչական վարույթը կարգավորող օրենսդրության մեջ առկա հարցերի վերաբերյալ գիտելիքներ մատուցելու և կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների, վարչական ակտի պարտադիր հատկանիշների, վարչական վարույթի մասնակիցների իրավունքների պաշտպանության, դատարանի կողմից վարչական ակտերի իրավաչափության գնահատման հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

22. J-013-15. Պետական շահերի պաշտպանության արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է պետական շահերի պաշտպանության հարցերով քաղաքացիական և վարչական դատավարության տարբեր փուլերում ծագող հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է քաղաքացիական և վարչական դատավարությունում դատախազի մասնակցության հիմքերի, գործը դատաքննության նախապատրաստելու, ապացուցման, դատաքննության, ինչպես նաև հատուկ վարույթի գործերի քննության ընթացքում ծագող հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի նախագահ *Է.Բաբայան*

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի անդամներ *Ա.Դավթյան*

Ա.Մկրտչյան

Հ.Մարտիրոսյան

Հավելված 2
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2015 թվականի
հունվարի 30-ի թիվ 36-Ա որոշման

Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատախազության աշխատակազմում պետական ծառայողների (այսուհետ՝ Ծառայող) 2015թ. վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը, ժամկետները և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:
3. Ծրագիրը նպատակաուղղված է Ծառայողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը հետևյալ ոլորտներում. դատախազությունում պետական ծառայություն, գործավարություն, հաշվապահական հաշվառում և գնումների իրականացում, արխիվային գործ, ժամանակի կառավարում:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:
5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 30 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ շաբաթ ժամկետով և ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ:
6. Ծառայողների վերապատրաստման ժամանակացույցը սահմանվում է 2015 թվականի ապրիլի 13-ից մայիսի 15-ը:

II. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ցանկ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-012-15	Դատախազությունում պետական ծառայության հարցերը	10
2.	G-014-15	Գործավարությունը դատախազական մարմիններում	10
3.	G-002-15	Հաշվապահական հաշվառման և գնումների իրականացման հիմնահարցերը	10
4.	G-013-15	Արխիվային գործի հիմնահարցերը	10
5.	G-006-15	Ժամանակի կառավարում	10

III. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) համառոտ նկարագիրը

1. J-012-15. Դատախազությունում պետական ծառայության հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է դատախազությունում պետական ծառայության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է դատախազությունում պետական ծառայության նորմատիվ իրավական կարգավորումը, դատախազությունում պետական ծառայողի վարքագծի կանոնները, կադրային քաղաքականության առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է դատախազության աշխատակազմում բոլոր պետական ծառայողների համար՝ բացառությամբ արխիվի բաժնի պետական ծառայողների և արխիվային գործառույթներ իրականացնող այլ պետական ծառայողների:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ ստուգման ենթակա մյուս դասընթացների հետ միասնական քննությամբ:

2. G-014-15. Գործավարությունը դատախազական մարմիններում

Դասընթացն անհրաժեշտ է դատախազական մարմիններում գործավարության հիմնադրույթների և ընթացակարգերի վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է դատախազական մարմիններում գործավարության հիմնական գործառույթները և փաստաթղթաշրջանառության հիմունքները:

Դասընթացը նախատեսված է դատախազության աշխատակազմում բոլոր պետական ծառայողների համար:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ ստուգման ենթակա մյուս դասընթացների հետ միասնական քննությամբ:

3. G-002-15. Հաշվապահական հաշվառման և գնումների իրականացման հիմնահարցերը

Դասընթացը պայմանավորված է հաշվապահական հաշվառման և գնումների իրականացման ոլորտում իրավական կարգավորումները ունկնդիրներին մատուցելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հաշվապահական հաշվառման, բյուջետային պլանավորման և գնումների իրականացման գործընթացի փուլերի նորմատիվ կարգավորման ներկայացումը:

Դասընթացը նախատեսված է դատախազության աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական հաշվառման, գնումների և նյութատեխնիկական ապահովման վարչությունների, ինչպես նաև ներքին աուդիտի բաժնի պետական ծառայողների համար:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ ստուգման ենթակա մյուս դասընթացների հետ միասնական քննությամբ:

4. G-013-15. Արխիվային գործի հիմնահարցերը

Դասընթացը պայմանավորված է արխիվային գործի ոլորտում իրավական կարգավորումները ունկնդիրներին մատուցելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հետևյալ թեմաների ներկայացումը՝ արխիվային գործի մասին օրենսդրությունը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի դրույթները, արխիվային գործի կազմակերպումը, արխիվային նյութերի պահպանման ժամկետները և այլն:

Դասընթացը նախատեսված է դատախազության աշխատակազմի արխիվի բաժնի պետական ծառայողների և արխիվային գործառույթներ իրականացնող այլ պետական ծառայողների համար:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ ստուգման ենթակա մյուս դասընթացների հետ միասնական քննությամբ:

5. G-006-15. Ժամանակի կառավարում

Դասընթացն անհրաժեշտ է ժամանակի արդյունավետ պլանավորման, կառավարման, ինչպես նաև անձնական և մասնագիտական կազմակերպվածության մակարդակի բարձրացման մասին գիտելիքների և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է ժամանակի և նրա նշանակության մասին հասկացությունը, ժամանակը՝ որպես անձի էներգետիկ պոտենցիալ, ժամանակի տեսակները, ժամանակի ընկալման տեսակները, գործունեության կառուցվածքը և դրա ժամանակային բնութագրիչները, մարդը և ժամանակը ճգնաժամային իրավիճակներում, մասնագետի ժամանակային իրազեկություն, ժամանակի հիմնական «թակարդները», ժամանակի կորստի և ժամանակային նախապատվությունների վերլուծություն, ժամանակաճշտում, ժամանակի կառավարման սկզբունքներն ու ռազմավարությունները, գլոբալ նպատակների որոշումը, երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը, կարճաժամկետ և օպերատիվ պլանները, նախապատվությունների որոշումը ABC վերլուծության միջոցով, Էյզենհաուերի սկզբունքը:

Դասընթացը նախատեսված է դատախազության աշխատակազմում բոլոր պետական ծառայողների համար:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ ստուգման ենթակա մյուս դասընթացների հետ միասնական քննությամբ:

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի նախագահ *Է.Բաբայան*

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի անդամներ *Ա.Դավթյան*

Ա.Մկրտչյան

Հ.Մարտիրոսյան

Հավելված 1
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2015 թվականի
հունվարի 30-ի թիվ 36-Ա որոշման

Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր
ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է 2015թ. դատախազների վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է դատախազների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը հետևյալ ոլորտներում.

ա) Հատուկ մասնագիտական ոլորտ: Վերապատրաստման գործընթացը վերաբերում է քրեական իրավունքում և դատավարությունում, ինչպես նաև վարչական իրավունքում և դատավարությունում առկա արդի հարցերին: Մասնավորապես, վերապատրաստման արդյունքում կատարելագործվում են քրեական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև քրեական իրավունքի, քրեական գործերով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի, ընդհանուր վարչական իրավունքի և արդի այլ հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները:

բ) Հարակից մասնագիտական ոլորտ: Վերապատրաստման գործընթացը վերաբերում է հասարակագիտական ուղղվածություն ունեցող վերաբերելի գիտելիքների և հմտությունների ձևավորմանը և կատարելագործմանը: Մասնավորապես, վերապատրաստման արդյունքում ունկնդիրները ձեռք կբերեն անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ սթրեսի և ժամանակի կառավարման, հանրային կապերի հիմունքների և հաղորդակցության, փաստարկման և հռետորիկայի ոլորտներում:

4. Ծրագիրն իրականացվում է առկա և հեռավար ուսուցման ձևով:

5. Ուսումնառության ժամաքանակը յուրաքանչյուր դատախազի համար սահմանվում է 80 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է երկու փուլով՝ յուրաքանչյուրը 40 ակադեմիական ժամ (մեկ շաբաթ) տևողությամբ:

6. Դատախազների վերապատրաստումն իրականացվում է հատուկ և հարակից մասնագիտական դասընթացների մոդուլների հիման վրա: Յուրաքանչյուր դատախազ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկված դասընթացների, ինչպես նաև հարակից մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրված դասընթացների շրջանակներում վերապատրաստվում է 40-ական ակադեմիական ժամ ծավալով:

7. Ուսումնառությունը սկսվում է դատախազների կողմից ընտրված առարկայական կուրսերի ցուցակը Օրենքով սահմանված կարգով Ակադեմիա ներկայացնելուց հետո երկամսյա ժամկետում՝ Ակադեմիայի կառավարման խորհրդի հաստատած ժամանակացույցի հիման վրա:

II. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ցանկ

1. Հարակից մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	G-009-15	Հանրային կապերի հիմունքներ և հաղորդակցություն	20
2.	G-004-15	Փաստարկում և հռետորիկա	20
3.	G-018-15	Սթրեսի և ժամանակի կառավարում	20

2. Հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
4.	Q-001-15	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով	10
5.	Q-021-15	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը	20
6.	Q-022-15	ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը	20
7.	Q-028-15	Զինվորական հանցագործությունների որակման հարցերը Հայաստանի Հանրապետությունում	10
8.	A-009-15	ՀՀ ընդհանուր վարչական իրավունքի հիմունքները	10
9.	A-008-15	ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը	10
10.	Q-029-15	Կիրառական քրեաբանության արդի հարցերը	10
11.	J-014-15	Դատական փորձաքննության արդի հարցերը	10
12.	Q-030-15	Կիբերհանցագործությունների դեմ պայքարի արդի հարցերը	10

III. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) համառոտ նկարագիրը

1. G-009-15. Հանրային կապերի հիմունքներ և հաղորդակցություն

Դասընթացն անհրաժեշտ է դատախազների համար ինչպես վարքագծի կանոնների արդյունավետ պահպանման, այնպես էլ՝ ԶԼՄ-ների հետ աշխատելու հմտությունների զարգացման համար:

Դասընթացը ներառում է արդարադատություն իրականացնող անձանց կարծրատիպերը որպես հասարակական կարծիքի բաղկացուցիչ, կոռումպացված իրավաբանի առասպելի սոցիալական նշանակությունը, իրավական հաղորդումների, տպագիր նյութերի դերը և ազդեցությունը հասարակական կարծիքի և հասարակական գիտակցության վրա, գովազդը որպես կարծրատիպերի ստեղծման, տարածման, փոփոխման գործիք, և <<իմիջ>> հասկացությունը իրավական PR–ում:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատախազների համար:

2. G-004-15. Փաստարկում և հռետորիկա

Դասընթացն անհրաժեշտ է ապացուցման, հերքման, հիմնավորման, զրուցակիցների մոտ համոզմունքի ձևավորման առումով:

Դասընթացը ներառում է փաստարկման գործընթացի բաղադրիչները, եղանակները, փաստարկման համակարգին ներկայացվող պահանջները:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատախազների համար:

3. G-018-15. Սթրեսի և ժամանակի կառավարում

Դասընթացն անհրաժեշտ է դատախազներին հոգեբանական և առողջական ռիսկերը նվազեցնելու համար՝ օգնելով առավել արդյունավետ իրականացնել պաշտոնական գործառույթները: Դասընթացն անհրաժեշտ է նաև դատախազների մոտ ժամանակի արդյունավետ պլանավորման, կառավարման, ինչպես նաև անձնական և մասնագիտական կազմակերպվածության մակարդակի բարձրացման մասին գիտելիքների և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է ինքնակարգավորման և ինքնակառավարման գործընթացների հոգեբանական բնութագրությունը, սթրեսի հիմքերը և տեսակները, ինքնակարգավորման տեսական մոտեցումները, սթրեսի կառավարման մեթոդների ընդհանուր բնութագրությունը և վերլուծությունը, ինքնաճանաչումը, ինքնավերահսկումը, ինքնակազմակերպումը սթրեսի կառավարման գործընթացում, սթրեսի կառավարումը և ինքնագիտակցությունը, ինքնակարգավորման մեխանիզմները և մակարդակները, մարդկային մարմինը որպես էներգետիկ համակարգ, ինքնակարգավորման ձևերի դասակարգումը մկանների թուլացման հիմքի վրա, ռելաքսային վիճակի համակարգը, ֆունկցիաները, մեխանիզմները: Դասընթացը ներառում է նաև ժամանակի և նրա նշանակության մասին հասկացությունը, ժամանակը՝ որպես անձի էներգետիկ պոտենցիալ, ժամանակի տեսակները, ժամանակի ընկալման տեսակները, գործունեության կառուցվածքը և դրա ժամանակային բնութագրիչները, մարդը և ժամանակը ճգնաժամային

իրավիճակներում, մասնագետի ժամանակային կոմպետենտություն, ժամանակի հիմնական «թակարդները», ժամանակի կորստի և ժամանակային նախապատվությունների վերլուծություն, ժամանակաչափում, ժամանակի կառավարման սկզբունքներն ու ռազմավարությունները, գլոբալ նպատակների որոշումը, երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը, կարճաժամկետ և օպերատիվ պլանները, նախապատվությունների որոշումը ABC վերլուծության միջոցով, Էյզենհաուերի սկզբունքը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատախազների համար:

4. Q-001-15. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ անձի ազատության և անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքի) պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և դրա կիրառման հարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատախազների համար:

5. Q-021-15. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումները, ինչպես նաև քրեական իրավունքի ոլորտում նոր իրավական դիրքորոշումները դատախազներին մատուցելու և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քրեական նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգով նախատեսված, ինչպես նաև ընթացիկ փուլում առաջացող այլ հիմնախնդիրների լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառ փորձի ներկայացումը, դրանց զարգացման միտումները և հեռանկարները, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը: Մասնավորապես, դասընթացն ընդգրկում է հանցավոր արարքների ճշգրիտ որակման և համաչափ,կանխարգելիչ և արդյունավետ պատիժ նշանակելու հարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատախազների համար:

6. Q-022-15. ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը

Դասընթացը անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումները, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները մատուցելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է ՀՀ քրեական դատավարության առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատախազների համար:

7. Q-028-15. Զինվորական հանցագործությունների որակման հարցերը Հայաստանի Հանրապետությունում

Դասընթացն անհրաժեշտ է զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական օրենքի ճիշտ կիրառման գիտելիքներ հաղորդելու և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է զինվորական հանցագործություններ նախատեսող հանցակազմերի մանրամասն ներկայացումը՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգի համաձայն, զինվորական կարգապահության խախտումների և զինվորական հանցագործությունների տարանջատման հարցերը, մասնավորապես՝ նույն արարքի համար կրկին պատասխանատվության չենթարկվելու սկզբունքի տեսանկյունից, ինչպես նաև զինվորական հանցագործությունների ընդհանուր և որակյալ հանցակազմերի որակման առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է զինվորական դատախազության դատախազների համար:

8. A-009-15. ՀՀ ընդհանուր վարչական իրավունքի հիմունքները

Դասընթացն անհրաժեշտ է վարչարարության հիմունքները և վարչական վարույթը կարգավորող օրենսդրության մեջ առկա հարցերի վերաբերյալ դատախազների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների, վարչական ակտի պարտադիր հատկանիշների, վարչական վարույթի մասնակիցների իրավունքների պաշտպանության, դատարանի կողմից վարչական ակտերի իրավաչափության գնահատման հարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատախազների համար:

9. A-008-15. ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է վարչական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ պայմանավորված դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ դատախազների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է գործը դատաքննության նախապատրաստելու, դատաքննության, ապացուցման, հայցի ապահովման, վերաքննիչ և վճռաբեկ վարույթների, հատուկ վարույթի գործերի քննության ընթացքում ծագող հարցերը:

Դասընթացը նախատեսված է պետական շահերի պաշտպանության ոլորտում գործող դատախազների համար:

10. Q-029-15. Կիրառական քրեաբանության արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է քրեաբանության հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հանցավորություն ծնող պատճառների ու պայմանների, հանցագործությունների կանխարգելմանն ուղղված կոնկրետ միջոցառումների վերաբերյալ հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատախազների համար:

11. J-014-15. Դատական փորձաքննության արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է փորձաքննությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք եւ արդյունավետ փարձաքննությունների նշանակման կարողությունների ձեւավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քրեական, վարչական եւ քաղաքացիական վարույթներում փորձաքննությունների նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, կատարման եւ արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատախազների համար:

12. Q-030-15. Կիբերհանցագործությունների դեմ պայքարի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է <<Կիբերհանցագործությունների մասին>> ԵԽ Կոնվենցիայի կիրառման, նշված բնույթի հանցագործությունների որակման և քննության առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է <<Կիբերհանցագործությունների մասին>> ԵԽ Կոնվենցիայով նախատեսված քրեական հանցագործությունների վերաբերյալ նորմերի իմպլեմենտացիայի խնդիրները ՀՀ քրեական օրենսգրքում, նշված Կոնվենցիայի հիման վրա ստեղծված կոմիտեի (T-CY)՝ արարքների որակման հետ կապված բանաձևերը, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքների որակման հիմնախնդիրները, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու քրեադատավարական առանձնահատկությունները և նշված բնույթի հանցագործություններով միջազգային փոխօգնության հիմնախնդիրները:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատախազների համար:

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի նախագահ *Է.Բաբայան*

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի անդամներ *Ա.Դավթյան*

Ա.Մկրտչյան

Հ.Մարտիրոսյան